# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/367 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ | Ձմեռային լրակազմ համազգեստ, որը կազմված է հանովի գլխանոցով ձմեռային բաճկոնից, ձմեռային տաբատից, աշխատանքային պաշտպանիչ կոշիկից և հյուսած ձմեռային գլխարկից: Ձմեռային բաճկոնը և տաբատը պետք է կարվեն պոլիեսթերաբամբակային կտորից: Կտորը պետք է ունենա յուղաջրակայուն ( MBO ) և 50% կոնցենտրատով թթվային հիմքերից ( защита от кислот концетрације 50% - K50 ) պաշտպանիչ հատկություն: Կտորի բաղադրությունը 35% բամբակ, 65% պոլիեսթեր, մակերեսային խտությունը - 245±5 գ/մ2: Կտորի պատռման բեռնվածությունը ըստ հիմքի պետք է կազմի ոչ պակաս 1,100Ն, ըստ միջնաթելի ոչ պակաս 800Ն, կտորի յուղակայունությունը / յուղանդրադարձման ցուցանիշը նախնական տեսքում պետք է կազմի 5 բալ, իսկ 5 անգամյա լվանալուց հետո ցուցանիշը չպետք է փոխվի: Կտորի թթվակայունության ցուցանիշը նախնական տեսքում պետք է կազմի 6 ժամ, իսկ 5 անգամյա լվանալուց հետո ցուցանիշը չպետք է փոխվի: Հագուստի գծային չափսերի փոփոխությունը թաց մշակումից հետո ըստ հիմքի պետք է կազմի ոչ ավել -2%, ըստ միջնաթելի - 1.5%: Հագուստի գունային համադրությունը՝ մուգ կապույտ գույնը (գույնի կոդը 19-3920TCX) համադրված ֆլյուրոսցենտ լիմոնե դեղին գույնի հետ (գույնի կոդը 13-0630TN): Բաճկոնի ձևվածքն ուղիղ ուրվագծով, ներքևի հատվածում տեղադրված գոտի՝ ռեզինե մանժետով: Երկարությունը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | գոտկատեղից 15-20 սմ ներքև, կանգուն օձիքով, օձիքի վրա կտորե կախիչ և պիտակ՝ տեսականու չափսի մասին նշումով: Բաճկոնի առաջամասում և ետևամասում որպես տաքացնող ներդիր տեղադրվում է 300 գ/մ2 խտությամբ սինթեպոն որը մգդակված է սև գույնի մետաքսյա աստառի հետ շեղանկյուն փախլավանման հյուսքավ, իսկ թևերի հատվածում 200 գ/մ2 խտությամբ սինթեպոն, որը ևս մգդակված է սև գույնի մետաքսյա աստառի հետ շեղանկյուն փախլավանման հյուսքավ: Մետաքսյա աստառի մակերեսային խտությունը պետք է կազմի ոչ պակաս 60±5 գ/մ2: Սինթեպոնի և մետաքսյա աստառի միջև լրացուցիչ դրվում է ոչ գործվածքային կտորեղեն՝ սինթեպոնի թափանցումը բացառելու համար: Թևքերը՝ ներկարված են, դաստակի հատվածում 5 սմ լայնությամբ ռեզինե մանժետով: Բաճկոնը կոճկվում է քամուց պաշտպանող կափույրի տակ տեղադրված նեյլոնե շղթայով: Պաշտպանող կափույրը միանում է առաջամասին նիկելագույն 4-5 զույգ կոճգամներով: Բաճկոնի ներքևի կողային հատվածում առկա է 2 ներսի գրպան, որոնց մուտքի հատվածը մշակված է ֆլյուրոսցենտ լիմոնե դեղին գույնի նեղ երիզներով, որոնց մեջտեղում տեղադրված է նեյլոնե շղթաներ: Բաճկոնն ունի նաև 1-2 վրադիր ծավալային գրպան կրծքամասի հատվածներում: Կրծքամասի գրպանները փակվում են կափույրներով՝ ընդ որում կափույրները մշակվում են 2 կտորից, որից վերին հատվածինը պետք է լինի մուգ կապույտ գույնի, իսկ ներքինը՝ ֆլյուրոսցենտ լիմոնե դեղին գույնի՝ վերինից 1-2 մմ լայն: Կափույրը մշակվում է մի կողմից ուղիղ, իսկ մյուս կողմից շեղակի ձևվածքով: Բաճկոնի կրծքավանդակի հատվածի վրադիր գրպանը (ները) մշակվում են զույգ կարերով, իսկ ծածկող կափույրների վրա տեղադրված են փոկեր՝ բացելուց գրպանները չաղտոտելու համար: Կրծքային գրպանները փակվում է կպչունային փականներով: Բաճկոնի կրծքավանդակի ողջ շրջագծով, ինչպես նաև թևերին տեղադրված են 4 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ: Մեջքի հատվածում, ինչպես նաև թևերի ողջ շրջագծին լուսանդրադարձնող ժապավենները պետք է տեղադրվեն կրկնակի: Լուսանդրադարձնող ժապավենների հիմքը 30% բամբակ և 70% պոլէսթեր է: Լուսանդրադարձնող ժապավենների լուսատանդրադարձման գործակիցը 600C ջերմաստիճանով 40 ցիկլ լվանալուց հետո չպետք է պակաս լինի 470 кд/лк.м2 ցուցանիշից: Բաճկոնի բոլոր զարդակարերը պետք է լինեն զույգ կարով՝ մշակված զույգ կարի մեքենայով: Բաճկոնի մեջքի մասում ասեղնագործման եղանակով դաջվում է «Աջափնյակ» գրառումը, իսկ կրծքավանդակի ձախակողմյան գրպանի վրա վրադիր կտորի վրա ասեղնագործվում է Երևանի քաղաքապետարանի տարբերանշանը՝ պատկերների |

| | | | |
|---|---|---|---|
| | | | համաչափության պահպանմամբ: Մեջքի ասեղնագործման և կրծքի լոգոյի չափսերը լրացուցիչ համաձայնեցվում են Գնորդի հետ: Գլխանոցը բաղկացած է 3 հատվածից, որից մեջտեղինը ֆլյուրոսցենտ լիմոնե դեղին գույնի, իսկ երկու կողային հատվածներինը մուգ կապույտ: Գլխանոցն առանձնանում է բաճկոնից շղթայի միջոցով, իսկ կոճկումն իրականացվում է միմյանց նկատմամբ խաչաձև կարված 7 սմ երկարությամբ երկու զույգ կպչունային ժապավեններով: Բաճկոնի ներսի կողմում՝ ներքևից 15 սմ բարձրության վրա կարվում է նեյլոնից տեղեկատվական պիտակ, որի մեջ նշվում են արտադրողի տվյալները / վավերապայմանները, հագուստի չափսը, հագուստի համառոտ նկարագիրը և խնամքի վերաբերյալ հրահանգ: Տաբատը ուղիղ ձևվածքի; Ներսի կողմից որպես տաքացնող ներդիր տեղադրվում է 100-150 գ/մ2 խտությամբ սինթեպոն որը միացվում է սև գույնի մետաքսյա աստառի հետ ուլտրաձայնային անկար եղանակով: Մետաքսյա աստառի մակերեսային խտությունը պետք է կազմի ոչ պակաս 60±5 գ/մ2: Սինթեպոնի և մետաքսյա աստառի միջև լրացուցիչ դրվում է ոչ գործվածքային կտորեղեն՝ սինթեպոնի թափանցումը բացառելու համար: Տաբատը ունի առջևից 2 կողային ներսի գրպաններ և 1-2 վրադիր ծավալային գրպաններ ծնկամասի հատվածում: Կողային ներսի գրպանների մուտքի ձևվածքը շեղ է, որոնց մուտքի հատվածն մշակված է ֆլյուրոսցենտ լիմոնե դեղին գույնի նեղ երիզներով: Վրադիր գրպանները փակվում են կափույրներով՝ ընդ որում կափույրներն մշակվում են 2 կտորից, որից վերին հատվածինն մուգ կապույտ գույնի, իսկ ներքին հատվածինն ֆլյուրոսցենտ լիմոնե դեղին գույնի՝ վերինից 1-2 մմ լայն: Վրադիր գրպանները մշակվում են զույգ կարերով, իսկ ծածկող կափույրների վրա տեղադրված են փոկեր՝ բացելուց գրպաններն չաղտոտելու համար: Գրպանները փակվում են կպչունային փականներով: Տաբատի գոտին 4 սմ լայնությամբ է, որի վրա կան 5 կամրջակ՝ գոտին անցկացնելու համար: Առաջամասը կոճկվում է նեյլոնե շղթայով և կոճակով: Տաբատի գոտու մեջ տեղադրված է 3.5 - 4 սմ լայնությամբ էլաստիկ ժապավեն՝ շիբլետանման ռեզին՝ նախատեսված տաբատի չափսն կարգավորելու համար: Տաբատի ծնկամասերից ներքև տեղադրված են 4 սմ լայնությամբ կրկնակի լուսանդրադարձնող ժապավեններ, Լուսանդրադարձնող ժապավենների հիմքը 30% բամբակ և 70% պոլէսթեր է: Լուսանդրադարձնող ժապավենների լուսատանդրադարձման գործակիցը 600C ջերմաստիճանով 40 ցիկլ լվանալուց հետո չպետք է պակաս լինի 470 кд/лк.м2 ցուցանիշից: Տաբատի բոլոր զարդակարերը պետք է լինեն զույգ կարով՝ մշակված զույգ կարի մեքենայով: |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Փաթեթավորումը թափանցիկ պոլիէթիլենային տոպրակներով, մեկ տոպրակի մեջ 1 լրակազմ: Տոպրակները պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսը: Աշխատանքային պաշտպանիչ կոշիկը նախատեսված աշխատակիցների անվտանգության ապահովման համար: Կոշիկը պետք է համապատասխանի EN 20345 ստնդարտի պահանջներին՝ S3 պաշտպանողականության աստիճանով: Կոշիկը բաղկացած է առաջամասից, ճտքերի ստորին հատվածից, ճտքերի վերին հատվածից, լեզվակից, տակացուից: Կոշիկի առաջամասը, ճտքերի ստորին հատվածները և լեզվակը պետք է կարված լինեն 1.9 – 2.1 մմ հաստությամբ սև գույնի բնական նակատե կաշվից: Ճտքերի վերին մասը պետք է կարված լինի բաց մոխրագույն կաշվից կամ բարձրորակ բաց մոխրագույն կաշվե փոխարինիչից՝ բաղկացած երկու հատվածից, որից վերին հատվածի բարձրությունը կազմում է 3 սմ, իսկ ստորին U –աձև հատվածի մեջտեղի մասի բարձրությունը 6.5սմ: Բաց մոխրագույն կաշվե հատվածի ներսի կողմից պետք է տեղադրված լինի սպունգե ներդիր: Կոշիկի լեզվակը կողքերից մշակվում է լրացուցիչ փակ կափույրներով՝ նախատեսված կեղտի ներթափանցումն կանխարգելելու համար: Կոշիկի ընդհանուր բարձրությունը պետք է կազմի 15 սմ, իսկ ճտքի բարձրությունն ետևամասի հատվածից պետք է կազմի 10.5 սմ: Ճտքերին առկա են 5 շարք մետաղական արագաքուղ կեռիկներ, կապումը՝ երկգույնանի կոշկաքուղերով: Կոշիկի տակացուն պետք է պատրաստված լինի երկշերտ պոլիուրետանից՝ ընդ որում տակացուի վերին շերտը պետք է լինի մոխրագույն գույնի, իսկ ստորին շերտն սև գույնի Կոշիկի տակացուի միացման եղանակը՝ պոլիուրետանի ուղիղ սրսկում - PU Injection method, որը դարձնում է տակացուն զագատովկայի հետ մեկ ամբողջություն: Կոշիկը պետք է ունենա մետաղական քթամաս՝ նախատեսված ոտքի մատերը մինչև 200 Ջոուլ էներգիայով հարվածներից պաշտպանելու համար, և մետաղական ճկվող ներդիր՝ նախատեսված ոտքի թաթերը սուր, կտրող իրերից պաշտպանելու համար: Կոշիկի ներսի հատվածում տեղադրված է նարնջագույն ծակոտկեն գործվածք: Կոշիկները պետք է արտադրված լինեն 2025 թ-ից ոչ շուտ, որի վերաբերյալ կոշիկի լեզվակի ներսի կողմում պետք է լինի համապատասխան մակնշում: Կոշիկի լեզվակի արտաքին հատվածի վրա կարվում է սև գույնի արհեստական թավշյա կտոր: Հյուսած ձմեռային գլխարկ նախատեսված է աշխատակցի գլուխը ցրտից պաշտպանելու համար: Գործվածքի բաղադրությունը՝ 100 % ակրիլ, գույնը սև: Գլխարկի չափսի կարգավորումն իրականացվում է ծալքավոր շերտի հաշվին: Գլխարկի առաջամասում, ծալքավոր հատվածի |

| | | |
|---|---|---|
| | | ծալքի մեջտեղի հատվածում արհեստական թավիշի վրա ասեղնագործվում է «Աջափնյակ»գրառումը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է Գնորդի համաձայնեցմանը ներկայացնի մեկ լրակազմ օրինակ նմուշներ՝ արտաքին տեսքը սահմնաված բոլոր ցուցանիշների հետ համաձայնեցնելու համար: Հաստատված նմուշն հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս և ենթակա է մուտքագրման՝ վերջին խմբաքանակը ներկայացնելիս: Մատակարարվող ապրանքները պետք է լինեն նոր, յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար, անհրաժեշտության դեպքում Գնորդի պահանջով մատակարար կազմակերպությունը իր միջոցների հաշվին պետք է ներկայացնի բոլոր ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր փորձարկման եզրակացություն: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

И / П Армине Овсепян Элбек в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/367 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 1 | И/П Армине Овсепян Элбек | Зимний комплект одежды, состоящий из зимнего куртки с капюшоном, зимних брюк, защитной рабочей обуви и вязаной зимней шапки Куртка и брюки должны быть сшиты из ткани полиэстер хлопок. Ткань должна обладать масловоротостойкостью (МВО) и защитой от кислот (концентрация 50 %) (защита от кислот концентрации 50 % – К50). Состав ткани: 35 % хлопок, 65 % полиэстер, поверхностная плотность — 245 ± 5 г/м². Разрывная нагрузка ткани по основе — не менее 1 100 Н, по утку — не менее 800 Н. Жиростойкость / показатель масловозвращения ткани в исходном виде должен составлять 5 баллов, и после 5-кратной стирки показатель не должен изменяться. Показатель кислотостойкости ткани в исходном виде должен быть 6 часов, и после 5 кратной стирки не должен изменяться. Линейное изменение размеров одежды после влажной обработки: по основе – не более –2 %, по утку – 1,5 %. Цветовое сочетание одежды: тёмно синий (код цвета 19 3920 TCX) в сочетании с флуоресцентно лимонным жёлтым цветом (код цвета 13 0630 TN). Крой куртки — с прямым силуэтом, в нижней части предусмотрен пояс с резиновой манжетой. Длина — от линии талии вниз на 15–20 см, с вертикальным воротником стойкой. На молнии предусмотрена тканевая планка и ярлык с указанием размера. В передней и задней части куртки как |

| | | | |
|---|---|---|---|
| | | | утепляющий вкладыш размещается синтепон плотностью 300 г/м$^2$, прошитый с чёрной шелковой подкладкой диагональной стежкой, а на рукавах — синтепон плотностью 200 г/м$^2$, также прошитый с чёрной шелковой подкладкой диагональной стежкой. Поверхностная плотность шелковой подкладки должна быть не менее 60 ± 5 г/м$^2$. Между синтепоном и шелковой подкладкой прокладывается нетканый материал, чтобы предотвратить проникновение синтепона наружу. Рукава окрашенные, в области запястья — резиновая манжета шириной 5 см. Куртка застёгивается под защёлку (планку ветро защиты) на нейлоновую цепочку. Защитная планка крепится к передней части 4–5 парами никелевых кнопок. В нижней боковой части куртки есть 2 внутренних кармана, вход в которые обработан узкими лампасами флуоресцентно лимонного цвета, внутри которых проложены нейлоновые шнурки. Также куртка имеет 1–2 наружных объёмных кармана в области груди. Карманы на груди закрываются клапанами — клапаны состоят из двух слоёв ткани: верхний — тёмно синий, внутренний — флуоресцентно лимонный, шириной на 1–2 мм меньше верхнего. Клапан выполнен с одной стороны прямым срезом, с другой — косым. Наружный карман груди (или карманы) обработаны двойным швом, а на покрывающих клапанах расположены «жабы» (петли) для открытия, чтобы не загрязнять карманы. Кнопки для закрытия карманов — липучки. По всей окружности груди куртки, а также по рукавам установлены светоотражающие ленты шириной 4 см. На спине и по всей окружности рукавов светоотражающие ленты размещаются в два ряда. Основа светоотражающих лент — 30 % хлопок, 70 % полиэстер. После 40 циклов стирки при температуре 600 °С коэффициент световозвращения не должен быть меньше 470 кд/лк•м$^2$. Все отделочные швы куртки должны выполняться двойным швом на машине для двойного шва. На спинке вышивается методом машинной вышивки надпись «Аджапняк», а на левом кармане груди — логотип мэрии Еревана на наружной части ткани, соблюдая пропорции изображения. Размеры вышивки на спине и логотипа на груди согласовываются с Заказчиком. Капюшон состоит из 3 секций: центральная — флуоресцентно лимонная, боковые — тёмно синие. Капюшон отделён от куртки цепочкой; застёжка выполняется двумя перекрещивающимися парами липучек длиной 7 см. На внутренней стороне куртки, на высоте 15 см от низа, пришивается нейлоновая информационная бирка, на которой указываются данные изготовителя / условия |

| | | | |
|---|---|---|---|
| | | | гарантии, размер одежды, краткое описание одежды и инструкции по уходу. Брюки — прямого кроя. С внутренней стороны как утепляющий вкладыш расположен синтепон плотностью 100–150 г/м$^2$, соединённый с чёрной шелковой подкладкой ультразвуковой стачкой. Поверхностная плотность шелковой подкладки должна быть не менее 60 ± 5 г/м$^2$. Между синтепоном и шелковой подкладкой прокладывается нетканый материал. Брюки имеют спереди 2 боковых внутренних кармана и 1–2 наружных объёмных кармана в области колен. Вход боковых внутренних карманов косой; входы обработаны узкими лампасами флуоресцентно лимонного цвета. Наружные карманы закрываются клапанами — клапаны состоят из двух слоёв ткани: верхний — тёмно синий, внутренний — флуоресцентно лимонный, шириной на 1–2 мм меньше верхнего. Клапаны выполнены двойным швом, на клапанах расположены «жабы» для открывания и защиты от загрязнения. Кнопки — липучки. Пояс брюк шириной 4 см, имеет 5 петель для ремня. Передняя часть застёгивается нейлоновой цепочкой и пуговицей. В поясе вставлена эластичная резинка шириной 3,5–4 см (шиблет-тип), позволяющая регулировать размер брюк. Внизу ног (ниже колен) расположены двойные светоотражающие ленты шириной 4 см. Основа лент — 30 % хлопок, 70 % полиэстер. После 40 циклов стирки при 600 °С коэффициент световозвращения не должен быть меньше 470 кд/лк•м$^2$. Все отделочные швы брюк должны быть двойным. Упаковка — в прозрачные полиэтиленовые пакеты, по одному комплекту в каждом пакете. Пакеты маркируются; на ярлыках указываются название модели, количество, размер. Защитная рабочая обувь предназначена для обеспечения безопасности сотрудников. Обувь должна соответствовать стандарту EN 20345 с уровнем защиты S3. Обувь состоит из носка, нижней части берца, верхней части берца, язычка и подошвы. Носок, нижние части берцов и язычок должны быть из черной натуральной юфтевой кожи толщиной 1,9–2,1 мм. Верхняя часть берцев должна быть из светло серой кожи или качественного кожзаменителя, из двух частей: верхняя часть высотой 3 см, нижняя U образной части — центральная часть высотой 6,5 см. С внутренней стороны светло серой кожаной части должен быть размещён поролоновый вкладыш. Язычок — с боковыми закрывающими планками для предотвращения попадания грязи. Общая высота обуви — 15 см, высота берца сзади — 10,5 см. На берцах 5 рядов металлических крючков, шнуровка — разноцветные шнурки. Подошва должна быть |

| | | |
|---|---|---|
| | | выполнена из двухслойного полиуретана: верхний слой — серого цвета, нижний — чёрного. Подошва крепится методом прямого впрыска полиуретана (PU injection), что делает подошву и верх обуви единым целым. Обувь должна иметь металлический носок, рассчитанный на защиту пальцев до 200 Дж, и металлическую гибкую пластину для защиты стопы от острых, режущих предметов. Внутренняя часть обуви — из оранжевой перфорированной ткани. Обувь должна быть изготовлена не ранее 2025 года; соответствующая маркировка должна быть на внутренней стороне язычка. Наружная часть язычка покрыта черным тканым искусственным бархатом. Вязаная зимняя шапка предназначена для защиты головы работника от холода. Состав ткани: 100 % акрил, цвет — чёрный. Регулировка размера осуществляется за счёт отворота. На передней части, в середине отворота, на искусственном бархате вышивается надпись «Аджапняк».Поставщик перед поставкой должен представить Заказчику один комплект в качестве образца для согласования внешнего вида и всех указанных показателей. Утверждённый образец считается частью контракта и подлежит внесению в акт при передаче последней партии.Поставляемая продукция должна быть новой; по требованию Заказчика поставщик на свои средства должен предоставить по каждой партии аккредитованное лабораторное заключение о соответствии техническим характеристикам. |